ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Բանկը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ նշենք, որ 2023 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների աճ: Մասնավորապես,

- Բանկի ընդհանուր Ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 42 մլրդ դրամով կամ 9%-ով և կազմել 506 մլրդ դրամ:



✓ Համախառն վարկային պորտֆելը կազմել է մոտ 279 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 49 մլրդ դրամով (21.4%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 55%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը աճել է մոտ 31 մլրդ դրամով (23.8%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը աճել է մոտ 18 մլրդ դրամով (18.1%-ով)

2023թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 28.7 մլրդ դրամով կամ 7.2%-ով և կազմել 430 մլրդ դրամ: Սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:



✓ Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածը ավելացել է 17.4 մլրդ դրամով (5%-ով) և կազմել ընդհանուր պարտավորությունների 83.54%-ը:

2023թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 12.9 մլրդ դրամով կամ 20.6%-ով և կազմել 76.7 մլրդ դրամ:



- 2023թ.-ին Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

CONVERSE BANK

TRUSTED BY GENERATIONS

2023թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Տարվա զուտ շահույթը կազմել է 14.6 մլրդ դրամ: Այն նախորդ տարվա համեմատ աճել է 3.7%-ով:



- Գործառնական շահույթը կազմել է մոտ 19 մլրդ դրամ նախորդ տարվա համեմատ նվազելով 1 մլրդ դրամով կամ 5.5%-ով:



- Տոկոսային եկամուտները կազմել են 37.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 24%-ով:
- Տոկոսային ծախսերը կազմել են 15.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.7%-ով:

2023թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Զուտ տոկոսային եկամուտները կազմել են մոտ 21.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 33.9%-ով:

- Ոչ տոկոսային եկամուտները կազմել են 13.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 21.1%-ով՝ պայմանավորված հիմնականում զուտ առևտրային եկամտի նվազմամբ:
- Ոչ տոկոսային ծախսերը կազմել են մոտ 16 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 23.3%-ով:



- Զուտ մասհանումները կազմել են 363 մլն դրամ, նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր 2.1 մլրդ դրամ:

- Ծախս/Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 46%՝ նախորդ տարվա 39.5% ցուցանիշի դիմաց:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է "Ռիսկի կառավարում" թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՐՍԵԼՈ ՎԵՆԴԵ**

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ **ԱՐՍԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ**